

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.09.2021թ. թիվ 2113336276 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 22 >> 09 2021թ. 7-13 14366

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Ռ.Հովհաննիսյանի Ն/7/108734-21 զեկուցագրի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Ռ.Հովհաննիսյանը զեկուցագրով հայտնել է, որ 2021թ սեպտեմբերի 10-ին ժամը 11:50-ին ՀՀ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից ահազանգ է ստացվել այն մասին, որ 094632262 հեռախոսահամարից իրենց է զանգահարել քաղաքացի Վահան Բաղդասարյանը և հայտնել, որ համաձայն չէ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.09.2021թ. թիվ 2113336276 որոշման հետ:

Զեկուցագրի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.09.2021թ. թիվ 2113336276 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին» 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին, իսկ նույն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի, համաձայն **լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը**: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ **հատվող երթևեկելի մասի առջև**՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրերում՝ **լուսացույցի կամ կարգավորողի առջև**՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Նույն որոշման 19-րդ կետի համաձայն՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ

արգելակման կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը: Այդ ազդանշանի դեպքում երթևեկելի մասի վրա գտնվող հետիոտները պետք է ազատեն այն, իսկ եթե դա հնարավոր չէ, կանգ առնեն հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերի բաժանող գծի վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.09.2021թ. թիվ 2113336276 որոշման հիմքում դրված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ Վահան Բաղդասարյանի արարքն արձանագրված խաչմերուկում առկա լուսացույցի վրա Վահան Բաղդասարյանի կողմից «Կանգ-գիծ» գծանշումը հատելու պահին միացված է եղել լուսացույցի դեղին արգելող ազդանշանը: Այսպես՝ տեսանյութի ժամը 14:20:57-րդ վայրկյանին միանում է լուսացույցի դեղին ազդանշանը, երբ Վահան Բաղդասարյանի տրանսպորտային միջոցը գտնվում էր «Կանգ-գիծ» գծանշման առջև: Վահան Բաղդասարյանի տրանսպորտային միջոցը «Կանգ-գիծ» գծանշումը հատում է միայն տեսանյութի ժամը 14:21:01-րդ վայրկյանին, երբ դեռ շարունակում էր միացված մնալ լուսացույցի դեղին արգելող ազդանշանը:

Հարկ է նշել, որ փաստերի վերլուծության արդյունքում հերքվում է նաև Վահան Բաղդասարյանի կողմից ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջների ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ Վահան Բաղդասարյանի տրանսպորտային միջոցը «Կանգ-գիծ» գծանշումը հատելուց առաջ գտնվել է դանդաղընթաց վիճակում, այսինքն՝ վերջինս հնարավորություն է ունեցել կանգնել առանց կտրուկ արգելակելու:

Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը խախտելու համար արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու կարգ սահմանված չէ (դիտավորություն, անզգուշություն և այլն):

Այսպիսով, Վահան Բաղդասարյանի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.09.2021թ. թիվ 2113336276 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Վահան Բաղդասարյանին (ծանուցման հասցե՝ ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Թումանյան փողոց, 15 շենք, 12 բնակարան):


Ե. Կարապետյան